Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների

Ո ւ ղ ե ց ո ւ յ ց

Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների

Ո ւ ղ ե ց ո ւ յ ց

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Բովանդակություն

Ներածություն	1
Քահանայություն	4
Օժանդակ Կազմակերպություններ	12
Ծրագիր և Ուսուցիչների Կատարելագործում	17
Ղեկավարում	19
Եկեղեցու Նյութերի և Ընտանեկան Պատմության Տեղեկության Ձեռքբերում	25

Բաշխում

Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույցը նախատեսված է քահանայության և օժանդակ կազմակերպությունների այն ղեկավարների համար, որոնք նոր են Եկեղեցում և Եկեղեցու հետ կապված սահմանափակ փորձ ունեն: Այն նույնպես կարող է օգտակար լինել այն տարածքներում, ուր Եկեղեցին վաղուց է հիմնվել: Ուղեցույցը բացատրում է այն սկզբունքները և կիրառումները, որոնք կօգնեն քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին կատարել իրենց կոչումների պարտականությունները:

© 1992, 2001 Intellectual Reserve, Inc. կողմից
Բոլոր իրավունքները պաշտպանված են

Printed in Germany

English approval: 3/01
Translation approval: 3/01
Translation of *Priesthood and Auxiliary Leaders' Guidebook*–ի թարգմանությունը
Armenian

Ներածություն

Եկեղեցին պատրաստել է այս ուղեցույցը օգնելու քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին սովորել իրենց կոչումների պարտականությունները և ճիշտ ձևով կատարել դրանք: Բոլոր ղեկավարները և Եկեղեցու մյուս անդամները պետք է նպաստեն Եկեղեցու առաքելությանը, որն է՝ հրավիրել բոլոր մարդկանց գալ դեպի Քրիստոսը և կատարելագործվել նրանում (տե՛ս Մորոնի 10:32): Այս առաքելությունը կատարելու համար ղեկավարներն անդամներին օգնում են.

- Քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանը յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի: Կիսվել ավետարանով, բերելով վկայություն, երբ հուշում է Սուրբ Հոգին:
- Կատարելագործել Սրբերին: Օգնել նորադարձներին զարգանալ Եկեղեցում, հետևելով, որպեսզի նրանք ունենան ընկեր ու հանձնարարություն, և սնուցվեն Աստծո խոսքով: Ստանալ ծեսերը և կապել ավետարանային ուխտերը, աշխատել պահել պատվիրանները, ինչպես խոսք են տվել, ծառայել մերձավորներին, հոգ տանել աղքատների և կարիքավորների մասին և ընկերակցել միմյանց հետ Սրբերի համայնքը կառուցելու համար:
- Փրկագնել մահացծներին: Գտնել մահացած նախնիների մասին տեղեկությունները և նրանց համար իրականացնել տաճարային ծեսեր, նրանց ընտանեկան վեհացմանը պատրաստելու համար:

Կիսվել Ավետարանով

Տերը Եկեղեցու անդամներին խնդրում է կիսվել ավետարանով: Ղեկավարները դա իրենք պետք է անեն և խրախուսեն ու ոգեշնչեն մյուս անդամներին անել դա: Ավետարանը կիսելու որոշ ճանապարհներ կարող են լինել.

- Լավ օրինակ ծառայել ավետարանային սկզբունքներով ապրելու համար:
- Պատմել ընկերներին և ընտանիքի անդամներին ավետարանի և այն օրհնությունների մասին, որ ավետարանը տալիս է իրենց:
- Աջակցել տարածքային և լիաժամկետ միսիոներներին:
- Պլանավորել միջոցառումներ և ծրագրեր ուրիշներին ավետարանը ներկայացնելու համար:

Ավետարանով կիսվելու մեկ այլ ճանապարհ է՝ անդամներին օգնելու պատրաստվել ծառայել լիաժամկետ միսիայում: Ղեկավարները կարող են երիտասարդներին օգնել պատրաստվել ծառայելուն, խրախուսել ծնողներին նախապատրաստել իրենց երեխաներին միսիայի և խրախուսել թոշակի անցած զույգերին ծառայել միսիայում: Բացի դա, նրանք կարող են անդամներին խորհուրդ տալ դրամ խնայել իրենց միսիայի համար և ֆինանսապես աջակցել միսիոներներին:

Ճյուղի նախագահի ղեկավարությամբ ճյուղի միսիայի ղեկավարը (երբ կանչվում է) հսկում է ճյուղի միսիոներական աշխատանքը:

Կատարելագործել Սրբերին

Սրբերին կատարելագործել՝ նշանակում է խրախուսել և օգնել յուրաքանչյուր անդամի ամեն օր ապրել ավետարանով՝ վեհացմանը նախապատրաստվելու համար: Սրբերի կատարելագործումը կատարվում է ինչպես հոգևոր, այնպես էլ ֆիզիկական առումով:

Հոգևոր նախապատրաստություն

Ղեկավարները պետք է շարունակ աղոթեն ոգեշնչում ստանալու համար, որպեսզի իմանան, թե ինչպես կարող են օգնել իրենց անդամներին մեծացնել իրենց հոգևոր զորությունը: Անդամներին սովորեցնելով ավետարանը և կոչ անելով ապրել ըստ դրա, ղեկավարները կարող են նրանց օգնել պատրաստվել հոգեպես: Նրանք անդամներին պետք է խրախուսեն ավելի մոտենալ Աստծուն աղոթելով, ծոմ պահելով, հաղորդություն ընդունելով, սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները ուսումնասիրելով: Նրանք պետք է անդամներին ծառայելու հնարավորություններ տան, հետևեն, որպեսզի Եկեղեցու ժողովները հոգևոր զորություն պարգևեն, և ցույց տան իրենց սերը ծառայելով առանձին անդամներին:

Սրբերին կատարելագործելու ջանքերը պետք է կենտրոնանան անհատների և ընտանիքների վրա: Եկեղեցին զորացնում և աջակցում է ընտանիքներին: Տունն ավետարանը ուսուցանելու և ղեկավարելու ամենակարևոր վայրն է: Ղեկավարները պետք է ընտանիքի անդամներին խրախուսեն սիրել և ծառայել միմիանց: Նրանք պետք է շեշտեն երեխաներին ավետրանանը ուսուցանելու և կանոնավոր ընտանեկան երեկոներ անցկացնելու ծնողների պատասխանատվությունը:

Եկեղեցու բոլոր անդամները պետք է պատրաստվեն ստանալու տաճարային օրհնությունները: Դրա հետ կապված անդամների պարտականությունները տրված են Ընտանեկան Ուղեցույց –ում:

(31180): Ղեկավարները կարող են անդամներին օգնել պատրաստվել տաճարային օրհնություններին, սովորեցնելով նրանց տաճարի մասին: Ղեկավարները պետք է անդամներին խրախուսեն ապրել արժանի կյանքով, որպեսզի վերջիններս կարողանան ստանալ տաճարի երաշխավորագիր և միշտ պահել այն վավեր, ստանալ տաճարային օժտումները և կնքման ծեսերը: Արժանի անձ է համարվում նա, ով մտնում է Տիրոջ հետ ուխտերի մեջ, օրինակ՝ մկրտության ուխտի, և ջանասիրաբար աշխատում է հավատարիմ մնալ այդ ուխտերին:

Ֆիզիկական և ժամանակավոր նախապատրաստություն

Ղեկավարները կարող են անդամներին օգնել պատրաստ լինել հոգալու իրենց ֆիզիկական և ժամանակավոր կարիքները, սովորեցնելով նրանց ապահովել իրենց ինքնուրույն և պատրաստ լինել չնախատեսված իրադարձությունների համնդիպելիս: Ղեկավարները անդամներին պետք է սովորեցնեն ապրել տասանորդի և ծոմապահության օրենքներով, պետք է խրախուսեն նրանց ապրել իրենց միջոցների սահմաններում և նշանակեն տնային և այցելող ուսուցիչներ՝ նրանց հանդեպ ուշադիր լինելու և օգնելու համար:

Ղեկավարները պետք է բացահայտեն ճյուղի կարիքավորներին ու աղքատներին և օգնեն նրանց, ինչպես նաև սովորեցնեն ճյուղի անդամներին նմանապես վարվել:

Ավելի շատ տեղեկություն ստանալու համար այն մասին, թե ինչպես կարող են անդմաները հոգալ իրենց ֆիզիկական կարիքները, տես Ընտանիքի Ուղեցույց:

Տաճարային օրհնությունները և Ընտանեկան պատմություն

Ի լրումն իրենց անձնական տաճարային ծեսերի անդամներն օգնում են փրկագնել մահացածներին՝ գտնելով իրենց նախնիներին և նրանց համար տաճարային ծեսեր կատարելով: Սկզբում պետք է աշխատել առաջին չորս սերունդների վրա: Ղեկավարները կարող են օգնել անդամներին, սովորեցնելով նրանց մահացածների փրկագնմանը վերաբերող ուսմունքները, խրախուսելով նրանց անուններ ներկայացնել տաճարային աշխատանքի համար և խնդրելով նրանց, հնարավորության դեպքում, իրենց նախնիների և այլ մահացածների համար կատարել տաճարային ծեսեր:

Քահանայություն

Քահանայությունը Աստծո զորությունն ու իշխանությունն է: Դրա միջոցով Նա իրականացնում է Իր աշխատանքը և փառքը, որն է՝ մարդու անմահությունը և հավերժական կյանքը (տես Մովսես 1:39): Հիսուս Քրիստոսը թույլ է տալիս Եկեղեցու արժանի տղամարդկանց կրել Իր քահանայությունը: Երբ կարգվում են քահանայության, նրանք իշխանություն են ունենում կատարելու Տիրոջ աշխատանքը, ինչպիսին է՝ ավետարանի քարոզումը, քահանայության ծեսերի կատարումը և , կոչված լինելու դեպքում, երկրի վրա Աստծո արքայության մեջ ծառայությունը:

«Եկեղեցում կա երկու քահանայություն, այսինքն՝ Մելքիսեդեկյան և Ահարոնյան (ՎևՈւ 107.1): Երկնային սուրհանդակներն երկրի վրա վերականգնեցին քահանայության իշխանությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Մելքիսեդեկյան քահանայություն

Մելքիսեդեկյան քահանայությունը ավելի բարձր քահանայություն է: Այն ստացել է իր անվանումը բարձրագույն մի մեծ քահանայի պատճառով, որն ապրել է Աբրահամի ժամանակներում (տես ՎևՈւ 107.2–5): Այս քահանայությունը կրող եղբայրները ունեն զորություն և իշխանություն Եկեղեցու ղեկավար պաշտոններ զբաղեցնելու և ավետարանի քարոզման աշխատանքները ղեկավարելու համար: Լինելով կոչված, նրանք կարող են նախագահել

միսիաների, շրջանների, ճյուղերի և քվորումների վրա:

Մելքիսեդեկյան քահանայության որևէ կոչմանը կարգվելուց առաջ տղամարդուն նախ պետք է շնորհվի Մելքիսեդեկյան Քահանայությունը: Այնուհետև նա կարգվում է պաշտոնի այդ քահանայության մեջ: Այդ պաշտոններն են՝ երեցը, բարձրագույն քահանան, հայրապետը, յոթանասունականը և առաքյալը: Միսիաների կամ շրջանի քահանայության ղեկավարները Մելքիսեդեկյան քահանայություն կրողներին պետք է կազմակերպեն միսիայի կամ շրջանի երեցների քվորումների մեջ: Երեցների յուրաքանչյուր քվորումում նախագահում է նախագահը: Նա քվորումի անդամներին սովորեցնում է իրենց պարտականությունները և խրախուսում է եղբայրությունը քվորումի անդամների մեջ: Մելքիսեդեկյան քահանայություն կրող ճյուղի բոլոր եղբայրները երեցների քվորումի անդամներ են:

Երեցների և երեցների քվորումի նախագահություն

Երեցները պետք է սովորեցնեն, բացատրեն, մկրտեն և հոգ տանեն Եկեղեցու մասին: Բացի Ահարոնյան քահանայության պաշտոնների իշխանութունները և պարտականությունները կրելուց երեցները կարող են տալ Սուրբ Հոգու պարգևը, ծառայել հիվանդներին և կատարել այլ ծեսեր (տես «Քահանայության ծեսերը և օրհնությունները» բաժինը Ընտանիքի Ուղեցույցում): Քահանայության իրենց ղեկավարների լիազորությամբ երեցները կարող են նախագահել Եկեղեցու ժողովներին, երբ ներկա չէ լիազորված բարձրագույն քահանան: (Տես ՎԼՈ 20.42–45; 107.11:)

Երբ ճյուղում կան Մելքիսեդեկյան Քահանայություն կրող արժանի տղամարդիկ, միսիայի կամ շրջանի նախագահությունը, առաջնորդվելով Սուրբ Հոգով, կարող է երեցների քվորում կազմակերպել ճյուղում, կանչելով և ձեռնադրելով քվորումի նախագահին քվորումի անդամների միջից: Երբ ճյուղում երեցների թիվն ավելանում է, միսիայի նախագահը կարող է կանչել և ձեռնադրել երեցների քվորումի նախագահի երկու խորհրդականների: Երեցների յուրաքանչյուր քվորումը կարող է ունենալ 96 անդամ: Քվորումն օրինակ է ծառայում, օգնում և առաջնորդում հայրերին և քվորումի այլ անդամներին:

Երեցների քվորումի նախագահը ծառայում է շրջանի կամ միսիայի նախագահի ղեկավարության ներքո և զեկուցում է նրան: Քվորումի նախագահը աշխատում է նաև ճյուղի նախագահի ղեկավարության ներքո որպես ճյուղի քահանայության գործադիր կոմիտեի և ճյուղի խորհրդի անդամ: Քվորումի նախագահը նախագահում է ճյուղի քվորումի անդամների վրա և օրինակ է ծառայում նրանց համար: Նա աշխատում է ճյուղի նախագահի հետ՝ կազմակերպելու և անցկացնելու տնային ուսուցումը, որպեսզի Եկեղեցին ակտիվ շփման մեջ գտնվի ճյուղի անդամների հետ:

Քվորումի նախագահը քվորումի անդամներին սովորեցնում է ավետարանը և

Մելքիսեդեկյան Քահանայության իրենց պարտականությունները (տես ՎԿՈ 107.89): Նա անդամներին խրախուսում է ծառայել ուրախությամբ և հեզությամբ, հատկապես կատարելով ամուսինների և հայրերի իրենց պարտականությունները: Նա նրանց սովորեցնում է, թե ինչպես պետք է կատարել քահանայական արարողությունները և միջոցառումներ է պլանավորում կամ ծրագրեր մշակում, որոնք կօգնեն անդամներին և կամրացնեն քվորումի եղբայրների միջև կապը: Նա պատասխանատու է քվորումի անդամների հոգևոր և ֆիզիկական բարեկեցության համար:

Երեցների քվորումի նախագահը նշանակում է տնային ուսուցիչներ, որոնք կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, նաև մեծահասակների (19 տարեկան և բարձր), որոնք կրում են Ահարոնյան Քահանայություն, և ճյուղի նախագահի հավանությամբ նշանակում է երիտասարդ տղաների որպես տնային ուսուցիչներ, որոնք Ահարոնյան Քահանայության մեջ ուսուցիչներ և քահանաներ են: Տնային ուսուցիչները նշանակվում են ծառայելու զույգերով առանձին հարցազրույցի ժամանակ: Ճյուղի նախագահի հավանությամբ երեցների քվորումի նախագահը կարող է Մելքիսեդեկյան Քահանյություն կրող տղամարդու կնոջը հանձնարարել ուղեկցել իր ամուսնուն այցերի ժամանակ, եթե զգացվում է զույգի օգնության կարիքը:

Քվորումի նախագահը քվորումի անդամներին սովորեցնում է տնային ուսուցման նպատակները (տես էջեր 6–7) և ոգեշնչում է նրանց լավ կատարել իրենց պարտականությունները: Քվորումի նախագահության անդամը պարբերաբար հարցազրույց է անցկացնում տնային ուսուցիչների հետ՝ նրանց այցերի և անդամների կարիքների վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով:

Երեցների քվորումի նախագահը վերահսկում է տնային ուսուցման աշխատանքները և տեղեկացնում ճյուղի նախագահին տնային ուսուցիչների այցերի, անդամների կարիքների և մտահոգությունների մասին:

Քվորումի նախագահը քվորումի անդամներին խրախուսում է մասնակցել Եկեղեցու ժողովներին ու միջոցառումներին և ծառայություն մատուցել: Նա չձեռնադրված տղամարդկանց և Ահարոնյան Քահանայություն կրող 18 տարեկանից բարձր տղամարդկանց օգնում է պատրաստվել ստանալ Մելքիսեդեկյան Քահանայությունը և տաճարային օրհնությունները: Տնային ուսուցիչներն օգնում են այդ աշխատանքում, սակայն հաճախ նախագահն անձամբ պետք է ծառայի իր քվուրումի անդամներին:

Բարձրագույն քահանա, հայրապետ, յոթանասունական և առաքյալ

Բարձրագույն քահանայի, հայրապետի, յոթանասունականի և առաքյալի պաշտոնների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար տես Ավետարանի Ուսմունքներ, գլուխ 14:

Տնային Ուսուցում

Տնային ուսուցիչներն այն եղբայրներն են, որոնք կրում են քահանայություն և կանչվում են օգնելու քահանայության ղեկավարներին ղեկավարել և ամրացնել ճյուղի անդամներին: Բացի սարկավագներից, Մելքիսեդեկյան և Ահարոնյան քահանայություններ կրող տղամարդիկ կարող են ծառայել որպես տնային ուսուցիչներ:

Տնային ուսուցիչները պետք է կանոնավոր կերպով այցելեն անդամներին, ցույց տան իրենց սերը նրանց հանդեպ, սովորեցնեն նրանց ավետարանը և հրավիրեն նրանց գալ դեպի Քրիստոսը: Տնային ուսուցիչները պետք է խրախուսեն հայրերին աղոթել և պատշաճ ձևով հոգ տանել իրենց ընտանիքների մասին: Տնային ուսուցիչներն օգնում են անդամներին հիվանդության, կորստի, միայնակության, գործազրկության և այլ կարիքների ժամանակ (տես ՎԿՈ 20.51, 53, 59):

Տնային ուսուցիչները ներկայացնում են Տիրոջը, ճյուղի նախագահին և քվորումի նախագահին, երբ այցելում են նշանակված ընտանիքները: Նրանք սովորում են ընտանիքի անդամների հետաքրքրությունների և կարիքների մասին, և անկեղծ ուշադրություն են հատկացնում նրանց: Սուրբ Հոգու ներշնչմամբ տնային ուսուցիչները աշխատում են սվորեցնել ավետարանը և զարգացնել ու ամրացնել իրենց կողմից այցելվող ընտանիքների անդամների հավատը: Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր տնային ուսուցիչ պետք է գործընկերներ ունենա:

Տնային ուսուցիչները պետք է.

- Ակտիվ շփման մեջ գտնվեն յուրաքանչյուր նշանակված անդամի հետ:
- Ճանաչեն հորը որպես ընտանիքի գլուխ (կամ մորը, եթե ընտանիքում հայր չկա, կամ միայնակ անդամի) և օգնեն նրան առաջնորդել իր ընտանիքի անդամներին դեպի անմահություն և հավերժական կյանք:
- Օգնեն անդամներին հավատք ունենալ առ Հիսուս Քրիստոսը, կիսվելով սուրբ գրությունների կամ կենդանի մարգարեների ուղերձներով, որոնք կարելի է գտնել Առաջին Նախագահության Ուղերձ-ում, Լիահոնայում կամ -ում:
- Աղոթեն այդ ընտանիքների հետ և օրհնեն նրանց:
- Այդ ընտանիքին տեղեկացնեն ժողովների, քվորումի և ճյուղի միջոցառումների և հատուկ նախագծերի մասին, օգնեն նրանց մասնակցել:

- Զեկուցեն երեցների քվորումի նախագահին (կամ ճյուղի նախագահին, եթե ճյուղը չունի երեցների քվորում) անդամների առաջընթացի մասին:
- Ընտանիքի անդամներին խրախուսեն և օգնեն ստանալ ավետարանային հիմնական ծեսերը և պահել դրանց հետ կապված ուխտերը:
- Խրախուսեն անդամներին կատարել միսիոներական աշխատանք, տաճարային աշխատանք և զբաղվել ընտանեկան պատմությունով:

Ծեսեր և օրհնություններ

Քահանայության ծեսերը սրբազան գործողություններ են, որոնք հայտնի են դարձվում Տիրոջ կողմից և կատարվում քահանայության իշխանությամբ: Քահանայության օրհնությունները տրվում են բուժելու, մխիթարելու և քաջալերելու համար: Մկրտելը, օրհնությունը և հաղորդության բաժանումը քահանայության ծեսերի օրինակներ են: Որոշ ծեսեր կարող են կատարվել Ահարոնյան քահանայություն կրող եղբայրների կողմից, սակայն ծեսերի մեծ մասը կատարվում են Մելքիսեդեկյան քահանայություն կրողների կողմից (տես «Ահարոնյան Քահանայություն» բաժինը այս ուղեցույցում և Ընտանիքի Ուղեցույցում): Ճյուղի նախագահները և երեցների քվորումի նախագահները պետք է սովորեցնեն եղբայրներին ծեսերը կատարելու ձևը: Այս ղեկավարները պետք է օգնեն հայրերին պատրաստվել և արժանի լինել կատարել ծեսերն իրենց ընտանիքի անդամների համար: Ծեսեր կատարող և օրհնություններ տվող եղբայրները պետք է պատրաստեն իրենց, ապրելով ավետարանի սկզբունքներով և աշխատելով առաջնորդվել Սուրբ Հոգով: Ցանկացած ծես կամ օրհնություն նրանք կատարում են աստվածային ձևով: Յուրաքանչյուր ծես պետք է կատարվի.

1. Հիսուս Քրիստոսի անունով:
2. Քահանայության իշխանությամբ:
3. Անհրաժեշտ եղանակով, օրինակ՝ հատուկ խոսքերով կամ սրբագործված յուղով:
4. Եթե անհրաժեշտ է, համապատասխան բանալիները կրող հատուկ նշանակված քահանայության ղեկավարի լիազորությամբ: Քահանայության ղեկավարի լիազորությունը պահանջող ծեսերից են՝ երեխաներին անվան պարգևումը և օրհնումը, մկրտությունը և հաստատումը, քահանայության ձեռնադրումը և քահանայության պաշտոնին կարգումը, օրհնությունը և հաղորդության բաժանումը, գերեզմանների օծումը:

Հատուկ ծեսերի և օրհնությունների հրահանգների համար տես Ընտանիքի Ուղեցույցը:

Ահարոնյան Քահանայություն

Ահարոնյան Քահանայությունը «հավելումն է մեծագույնի կամ Մելքիսեդեկյան Քահանայության (տես ՎԿՈ 107.14): Այն կոչվել է Մովսեսի եղբայր Ահարոնի

անունով, որովհետև տրվել էր նրան և նրա հետնորդներին: Ահարոնյան քահանայություն կրող եղբայրներն իշխանություն ունեն կատարելու որոշակի քահանայության ծեսեր: Քահանաները կարող են իրականացնել մկրտություններ, օրհնել հաղորդությունը, կարգել քահանաներին, ուսուցիչներին և սարկավագներին: Քահանաները և ուսուցիչները կարող են պատրաստել հաղորդությունը: Քահանաները, ուսուցիչները և սարկավագները կարող են բաժանել հաղորդությունը (տես ՎԼՈ 107.13–14, 20):

Երբ Ահարոնյան Քահանայությունը տրվում է որևէ անձի, վերջինս կարգվում է այդ քահանայության որևէ պաշտոնի: Պաշտոններն են՝ սարկավագ, ուսուցիչ և քահանա: Սուրբ Հոգու առաջնորդությամբ և կախված եղբարների քանակից ճյուղի նախագահը, որը ճյուղում Ահարոնյան Քահանայության նախագահն է, միևնույն պաշտոնը կրող եղբայրներին միավորում է սարկավագների (12–13 տարեկան), ուսուցիչների (14–15 տարեկան) և քահանաների (16–18 տարեկան) քվորումների մեջ:

Ճյուղի նախագահը, որը կրում է Ահարոնյան Քահանայության նախագահության բանալիները, ճյուղում հանդիսանում է Ահարոնյան Քահանայության նախագահը: Նա քահանաների քվորումի նախագահն է և կարող է կանչել երկու արժանի քահանաների ծառայելու որպես նրա օգնականներ քահանաների քվորումում: Նա կարող է կանչել արժանի ուսուցչի և արժանի սարկավագի ծառայելու ուսուցիչների և սարկավագների քվորումներում: Նա կամ նշանակված խորհրդականը կարող են երկու խորհրդականներ կանչել ուսուցիչների և սարկավագների քվորումների նախագահների համար այդ նախագահությունները ամբողջովին դարձնելու նպատակով: Եթե քվորումներում կան բավականին թվով երիտասարդներ, ճյուղի նախագահության անդամը կարող է յուրաքանչյուր քվորումում կանչել մի երիտասարդի ծառայելու որպես քվորումի քարտուղար: Ճյուղի նախագահը ձեռնադրում է իր օգնականներին քահանաների քվորումում, ուսուցիչների և սարկավագների քվորումների նախագահներին: Ճյուղի նախագահության անդամը ձեռնադրում է խորհրդականներին քվորումի նախագահություններում և քարտուղարներին:

Քահանայության ժողովի բացիչ մասից հետո ճյուղի նախագահի ղեկավարությամբ Ահարոնյան Քահանայությունը հավաքվում է Մելքիսեդեկյան Քահանայությունից առանձին:

Երբ ճյուղի նախագահը կազմավորում է Ահարոնյան Քահանայության քվորումները, առաջնորդվելով Սուրբ Հոգով, նա

Մելքիսեդեկյան Քահանայություն կրող կամ Ահարոնյան Քահանայությունում քահանաների պաշտոն զբաղեցնող որևէ մեկին կանչում է ծառայելու որպես Երիտասարդ Տղամարդկանց նախագահ: Երիտասարդ Տղամարդկանց նախագահն աշխատում է ճյուղի նախագահության և Ահարոնյան Քահանայության քվորումների նախագահությունների հետ՝ օգնելու քվորումի անդամներին ամրացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը և հասկանալ ու պարտավորվել ապրել վերականգնված ավետարանի սկզբունքներով:

Ահարոնյան քահանայության նպատակներն են՝ օգնել այդ քահանայությանը կարգված յուրաքանչյուր մարդուն.

- Դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել ըստ դրա ուսմունքների:
- Հավատարմորեն ծառայել քահանայության կոչումներում և կատարել քահանայության պաշտոնի իրենց պարտականությունները:
- Մատուցել իմաստալից ծառայություն:
- Պատրաստվել և արժանի կյանք վարել Մելքիսեդեկյան Քահանայություն և տաճարային օրհնություններ ստանալու համար:
- Պատրաստվել ծառայել լիաժամկետ միսիայում:
- Ձեռք բերել կրթություն և պատրաստվել դառնալ արժանի ամուսին և հայր:
- Հարգալից վերաբերմունք ցուցաբերել կանանց, աղջիկների և երեխաների հանդեպ:

Ճյուղի նախագահն աշխատում է Ահարոնյան Քահանայության քվորումի նախագահությունների հետ և ծրագրում քվորումների ժողովները, ծառայության նախագծերը և այս նպատակներն իրականացնող այլ միջոցառումները: Միջոցառումները պետք է ֆիզիկական, զգացմունքային և հոգևոր բարենպաստ միջավայր ստեղծեն պատանիների համար՝ ընկերներ ձեռք բերելու, ծառայություն մատուցելու և շփման ունակություններ զարգացնելու համար այն մարդկանց հետ, ովքեր կիսում են նույն հավատքը և սկզբունքները:

Ահարոնյան Քայանայության քվորումի նախագահությունները և Երիտասարդ Կանանց Միության նախագահությունները Ահարոնյան Քահանայության և Երիտասարդ Կանանց չափահաս ղեկավարների օգնությամբ ճյուղի նախագահի հսկողությամբ կարող են պլանավորել Ահարոնյան Քահանայության և Երիտասարդ Կանանց միավորված միջոցառումներ: Ընդհանուր միջոցառումները կոչվում են Միացյալ:

Սարկավագ

Արժանի երիտասարդ տղամարդը, որը կարող է մկրտվել և հաստատվել, կարող է ձեռնադրվել որպես սարկավագ, եթե նա առնվազն 12 տարեկան է: Սարկավագներին սովորաբար հանձնարարում են բաժանել հաղորդությունը, հոգ տանել

Եկեղեցու շենքերի և տարածքների մասին, օգնել կարիքավորներին և կատարել հատուկ հանձնարարություններ, ինչպես ծոմապահությունների նվիրատվությունների հավաքումն է:

Սարկավագների քվորումը կարող է կազմված լինել 12 սարկավագներից (տես ՎԼՈ 107.85):

Ուսուցիչ

Արժանի երիտասարդ տղամարդը կարող է ձեռնադրվել որպես ուսուցիչ, եթե նա առնվազն 14 տարեկան է: Ի լրումն սարկավագի լիազորությունների, ուսուցիչները կարող են պատրաստել հաղորդությունը և ծառայել որպես տնային ուսուցիչներ:

Ուսուցիչների քվորումը կարող է ընդգրկել 24 ուսուցիչ (տես ՎԼՈ 107.86):

Քահանա

Արժանի եղբայրները կարող են ձեռնադրվել որպես քահանաներ, երբ նրանք առնվազն 16 տարեկան են: Սովորաբար, նորադարձ չափահաս տղամարդիկ ձեռնադրվում են որպես քահանաներ, մինչև բավականին փորձ ձեռք բերեն որպես երեցներ ձեռնադրվելու համար:

Ի լրումն սարկավագների և ուսուցիչների բոլոր լիազորությունների, քահանաները կարող են մկրտել և անցկացնել հաղորդությունը, վարել ժողովներ, եթե Մելքիսեդեկյան քահանայության որևէ կրող ներկա չէ (տես ՎԼՈ 20.46–51):

Քահանաների քվորումը կարող է բաղկացած լինել 48 քահանաներից (տես ՎԼՈ 107.87–88):

Օժանդակ Կազմակերպություններ

Ճյուղում սկզբում հիմնվում են քահանայության կազմակերպությունները: Երբ անդամների և ղեկավարների թիվը մեծանում է և հավաքատեղերը ավելի մատչելի են դառնում, ճյուղի նախագահը կարող է կազմակերպել քահանայության օժանդակ կազմակերպություններ, եթե կա դրանց կարիքը: Օժանդակ կազմակերպություններն են՝ Սփոփող Միությունը, Երիտասարդ Տղամարդկանց, Երիտասարդ Կանանց Միությունները, Երեխաների Խումբը և Կիրակնօրյա Դպրոցը:

Եթե ճյուղը չունի բավարար թվով կանայք, երիտասարդ կանայք և երեխաներ՝ առանձին օժանդակ կազմակերպությունների բաժանվելու համար, նրանք հանդիպում են միասին հրահանգներ ստանալու համար Սփոփող Միության նախագահի ղեկավարությամբ:

Սփոփող Միություն

Սփոփող Միությունն աջակցում է քահանայության ղեկավարներին, որոնք խրախուսում են չափահաս քույրերին (18 տարեկան և բարձր) զարգացնել հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ: Սփոփող Միությունն օգնում է կանանց և նրանց ընտանիքներին գալ դեպի Քրիստոսը և ապրել արժանի կյանքով Սուրբ Հոգու առաջնորդությանն արժանանալու համար: Սփոփող Միության քույրերը սովորեցնում և սովորում են ավետարանի ուսմունքները, բարեգործական ծառայություններ են մատուցում, զարգացնում են

տնարարության ունակությունները, ծառայում և օգնում են միմյանց:

Երբ ճյուղում կա առնվազն երկու կին, ճյուղի նախագահը կարող է հիմնել Սփոփող Միություն: Ճյուղի նախագահության ղեկավարությամբ Սփոփող Միության նախագահը.

- Կիրակի օրը ղեկավարում և վարում է չափահաս կանանց դասերը (18 տարեկան և բարձր), երբ տղամարդիկ և երիտասարդ տղամարդիկ քահանայության ժողով են անցկացնում:
- Աշխատում է ճյուղի նախագահի հետ, տեղեկացնելով նրան կանանց, երիտասարդ կանանց և երեխաների կարիքների և միջացառումների մասին:
- Օգնում է ճյուղի նախագահին գտնել կարիքավորներին և հոգ տանել նրանց համար:

Պատանիներ

Տես «Ահարոնյան Քահանայություն» բաժինը այս ձեռնարկի xx–xx էջերի վրա:

Երիտասարդ Կանայք

Ճյուղի նախագահությունը երիտասարդ կանանց և նույն տարիքի երիտասարդ տղամարդկանց հանդեպ, ըստ էության, ունի նույն պատասխանատվությունները:

Երիատարդ կանանց կազմակերպությունն օգնում է աղջիկներին (12–17 տարեկան) դառնալ ավելի նվիրված Հիսուս Քրիստոսի ավետարանին, հարգել ծնողներին, պատրաստվել կատարել և պահել տաճարային սուրբ ուխտերը, դառնալ արժանի կանայք և մայրեր, ծառայություն մատուցել: Երիտասարդ կանայք ստանում են ավետարանային հրահանգները Կիրակի օրվա ժողովներին և շաբաթվա ընթացքում անցկացվող միջոցառումների ժամանակ:

12–17 տարեկան երիտասարդ կանայք կարող են Սփոփող Միությունից առանձին հավաքվել, եթե ճյուղի նախագահը գտնում է, որ ճույղում բավականին թվով երիտասարդ կանայք կան: Նա կարող է կազմակերպել նրանց Փեթակ (12–13 տարեկան), Համաստեղություն (14–15 տարեկան) և Դափնի (16–17 տարեկան) դասարաններում: Յուրաքանչյուր դասարանում նա կարող կանչել և ձեռնադրել մի արժանի աղջկա որպես դասարանի նախագահ: Ճյուղի նախագահության անդամը կարող է կանչել և ձեռնադրել լրացուցիչ արժանի աղջիկների որպես նախագահի խորհրդականներ և դասարանի քարտուղար, եթե դասարանում կան բավականին թվով աղջիկներ:

Ճյուղի նախագահի ղեկավարությամբ Երիտասարդ կանանց նախագահությունը (չափահասները) աշխատում են

ճյուղի նախագահության հետ և Երիտասարդ Կանանց դասարանների նախագահների հետ (աղջիկներ)՝ ամրացնելու յուրաքանչյուր աղջկա հավատքը առ Հիսուս Քրիստոսը և մեծացնելու նվիրվածությունը վերակնգնած ավետարանի սկզբունքներին ներդաշնակ ապրելաձևին: Կիրակնօրյա ավետարանի հրահանգները և շաբաթվա ընթացքում անցկացվող միջոցառումները կարող են օգնել իրականացնել այդ նպատակները:

Երիտասարդ կանանց դասարանների նախագահությունները և Ահարոնյան Քահանայության քվորումների նախագահությունները Երիտասարդ Կանանց և Ահարոնայն չափահաս ղեկավարների հետ միասին և ճյուղի նախագահի հսկողության տակ կարող են պլանավորել Երիտասարդ Կանանց և Ահարոնայն Քահանայյության ընդհանուր միջոցառումներ: Ընդհանուր միջացառումները կոչվում են Միացյալ:

Երեխաների Խումբ

Երեխաների Խումբը երեխաներին (3–11 տարեկան) սովորեցնում է Հիսուս Քրիստոսի ավետարանը և օգնում է նրանց ապրել ըստ դրա: Երեխաների Խմբում երեխաները զգում են Փրկչի սերը և այն ուրախությունը, որ տալիս է ավետարանը:

Երեխաների Խմբի նշնաբանն է. «Բոլոր քո զավակները պիտի սովորեցվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (3 Նեփի 22.13): Երեխաների Խումբն օգնում է քահանայության ղեկավարներին իրականացնել Եկեղեցու առաքելության նպատակները, խրախուսելով երեխաներին ուսումնասիրել սուրբ գրությունները, աղոթել և հետևել Փրկչի օրինակին: Երեխաների Խմբի նպատակներն են.

- Սովորեցնել երեխաներին, որ իրենք Աստծո զավակներն են և, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են իրենց:
- Օգնել երեխաներին սովորել սիրել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:
- Օգնել երեխաներին նախապատրաստվել մկրտությանը, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և պահել իրենց մկրտության ուխտերը և խոստումները:
- Օգնել երեխաներին աճել ավետարանի ծրագրի մասին իրենց իմացության մեջ և հնարավորություններ տալ նրանց ապրել համաձայն ավետարանի սկզբունքների:
- Օգնել տղաներին նախապատրաստվել քահանայություն ստանալուն և

արժանի լինել օգտագործել այդ քահանայությունը ուրիշներին օրհնելու և ծառայելու համար:

- Օգնել աղջիկներին պատրաստվել դառնալ արդար երիտասարդ կանայք, հասկանալ քահանայության օրհնությունները և տաճարի կարևորությունը, և ծառայել ուրիշներին:

Քահանայության և Երեխաների Խմբի ղեկավարները և ուսուցիչները, փնտրելով և ստանալով Սուրբ Հոգու առաջնորդությունը, օգնում են իրենց սաների ծնողներին սովորեցնել Հիսուս Քրիստոսի ավետարանը: Երեխաների Խմբի յուրաքանչյուր երեխա, հատկապես այն երեխաները, որոնց տներում ավետարանային ուսուցումը ամուր հիմքերի վրա չէ դրված, պետք է սիրված լինի ուսուցիչների և ղեկավարների կողմից: Եթե երեխաների թիվը բավարար է, նրանք կարող են հավաքվել կանանց և երիտասարդ կանանց միություններից առանձին՝ դասեր և միացյալ ժամ անցկացնելու համար այն ժամանակ, երբ անց է կացվում Կիրակնօրյա դպրոցը, Սփոփող Միության և Երիատսարդ Կանանց Միության ժողովները: Ճյուղերը շաբաթվա ընթացքում կարող են Երեխաների Խմբի տարիքի երեխաների համար միջոցառումներ կազմակերպել: Միայցյալ ժամի և այլ միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ քահանայության ղեկավարների միջոցով:

Կիրակնօրյա Դպրոց

Կիրակնօրյա Դպրոցը, Կիրակնօրյա ժողովների ժամանակ հոգևոր ուժ և

հրահանգներ պարգևելու միջոցով օգնում է 12 տարեկան և բարձր տարիքի անդամներին և հետաքրքրվողներին սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել համաձայն ավետարանի սկզբունքների: Կիրակնօրյա Դպրոցի ուսուցիչները խրախուսում են անդամներին.

- Ուսումնասիրել սուրբ գրությունները:
- Հնազանդվել պատվիրաններին:
- Ստանալ ավետարանի հիմնական ծեսերը և պահել համապատասխան ուխտերը:

Կիրակնօրյա Դպրոցի նախագահությունը վերահսկում է Կիրակնօրյա Դպրոցը: Նախագահը ճյուղի նախագահին խորհուրդ է տալիս ընտրել այս կամ այն անդամին որպես ապագա ուսուցիչ: Ճյուղի նախագահությունը կանչում և ձեռնադրում է ուսուցիչներին Կիրակնօրյա դասերն ուսուցանելու համար: Երիտասարդները և չափահասները հավաքվում են միասին, եթե նրանց թիվը փոքր է: Մեծ թվի դեպքում նրանք կարող են դասերի համար հավաքվել առանձին:

Ծրագիր և Ուսուցիչների Կատարելագործում

Ծրագիր

Եկեղեցին քահանայության քվորումներին և օժանդակ կազմակերպություններին ապահովում է ծրագրի նյութերով: Տարածքի նախագահությունը տրամադրում է հրահանգներ ամեն տարի նյութերն օգտագործելու համար: Հրահանգները տրամադրվում են նյութերի տարեկան առաքման հետ միասին Եկեղեցու բաշխման կենտրոնից: Տեղեկություններ Ծրագրի վերաբերյալ Քահանայության և օժանանդակ կազմակերպությունների համար (36363) հրատարակումը, որը կարելի է ստանալ քահանայության ղեկավարներից, պարունակում է Եկեղեցու ամփոփ ծրագիրը: Ղեկավարներին և ուսուցիչներին խորհուրդ է տրվում օգտագործել միայն Եկեղեցու հաստատված նյութերը և խուսափել կոմերցիոն արտադրանքներից:

Առաջին Նախագահության Ողերձները, Այցելող Ուսուցիչների Ուղերձները և Լիահոնայում պարունակվող նյութերը կարող են թարմացնել և հարստացնել ծրագրով նախատեսված դասերը: Այդ նյութերը կարելի է ձեռք բերել տպագրված և էլեկտրոնային տեսքով Ինտերնետից Եկեղեցու պաշտոնական էջում. www.lds.org: Եթե Լիահոնան մատչելի է, ճյուղի բոլոր ընտանիքները պետք է բաժանորդագրվեն:

Ուսուցիչների կատարելագործում

Ծնողները, ղեկավարները և ուսուցիչները Հիսուս Քրիստոսի ավետարանը

սովորեցնելու սուրբ պատասխանատվություն ունեն: Նրանց ջանքերի շնորհիվ ուրիշները կարող են սովորել կիրառել ավտերանի սկզբունքները առօրյա կյանքում: Տերն ասել է. «Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք միմյանց պետք է ուսուցանեք արքայության վարդապետությունը: Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կուղեկցի ձեզ» (տես ՎԿՈ 88:77–78):

Ճյուղի նախագահությունը պատասխանատու է ճյուղում ուսուցանման որակի համար: Երբ ճյուղը բավական ամուր լինի, նախագահությունը կարող է որևէ եղբոր կամ քրոջ կանչել ծառայելու որպես ուսուցիչների կատարելագործման կոորդինատոր:

Ուսուցանման և ուսուցիչների կատարելագործման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՞ս Ուսուցչի Ձեռնարկ:

Ղեկավարում

Փրկչի օրինակը

Մեր Փրկիչը, Հիսուս Քրիստոսը, անդամների համար ընտանիքում և Եկեղեցում ղեկավար լինելու կատարյալ օրինակ է ծառայում: Նա սիրում էր Իր Հորը և այն մարդկանց, որոնց ծառայում էր: Նա ապրում էր ուրիշներին ծառայելու, ընկածներին բարձրացնելու և հուսահատվածներին հույս տալու համար:

Հիսուսը հասկանում էր Իր կոչումը և աղոթքով ու ջանասիրությամբ կատարում էր այն: Նա միշտ կատարում էր Իր Հոր կամքը և տալիս էր Նրան ամբողջ փառքը, ոչինչ չփնտրելով Իր համար: Նա զոհաբերեց ամեն ինչ մարդկության համար, տալով Իր կյանքը խաչի վրա և քավելով բոլոր մարդկանց մեղքերը:

Հետևելով Փրկչի օրինակին ղեկավարներն ավելի մեծ ունակություններ կունենան Նրա աշխատանքը կատարելու համար: Նա կոգեշնչի ղեկավարներին, որոնք կիմանան, ինչ անել և ինչ ասել (տես ՎԿՈ 100.6): Ղեկավարները իրապես կդառնան Նրա մտերիմ ծառաները Աստծո արքայությունը կառուցելու գործում: Նրանք կդառնան սուրբ գրությունների աշակերտները, կսովորեն ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, և կձգտեն սովորեցնել նրանց, ում ծառայում են:

Ղեկավարի բնութագիրը

Հավատ

Իր երկրային ծառայության ժամանակ Փրկիչը կոչ արեց իր աշակերտներին հավատք գործադրել (տես Մատթեոս ԺԷ.14–21; Ղուկաս Ը.22–25): Եկեղեցու ղեկավարները պետք է հավատան, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն ու Քավիչն է: Նրանք զարգացնում են իրենց հավատքը աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության, հնազանդության և ապաշխարության միջոցով: Սնուցելով հավատքի սերմը, մենք կարող ենք աճեցնել այն մեր մեջ և պտուղ ստանալ, որն ամենաքանկը և ամենաքաղցրն է (տես Ալմա 32.42):

Սեր

Փրկիչն ասել է. «Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վերա սեր ունենաք» (Հովհաննես ԺԳ.34–35): Ղեկավարները պետք է սիրեն մարդկանց, որոնց համար Տերը նրանց պատասխանատու է դարձրել: Սիրելով մարդկանց ղեկավարները կցանկանան ծառայել նրանց, սովորեցնել նրանց, և օգնել աշխատել իրենց փրկության համար:

Աշխարհում մարդիկ հազվադեպ են մտածում ղեկավարների մասին որպես ծառաների: Սակայն Փրկիչն Իր խոսքերով և Իր օրինակով սովորեցրել է, որ ղեկավարները պետք է ծառայեն այն մարդկանց, որոնց ղեկավարում են: Նա ասել է Տասներկուսին. «Ձեզանից ով որ կամենա առաջին լինել, թող ձեզ ծառա լինի» (Մաթեոս Ի.27): Երբ մենք ծառայում ենք ուրիշներին, ծառայում ենք Տիրոջը (տես Մատթեոս ԻԵ.31–40; Մոսիա 2.17):

Հնազանդություն

Հիսուս Քրիստոսը հնազանդության և Երկնային Հորը ենթարկվելու կատարյալ օրինակ է (տես Մատթեոս ԻԵ.39; Հովհաննես Ե.30): Ղեկավարները պետք է հնազանդվեն Տիրոջ պատվիրաններին, այդպիսով օրինակ ցույց տալով ուրիշներին և արժանի լինելով Սուրբ Հոգու Առաջնորդությանը: Հնազանդությունը ցույց է տալիս Տիրոջ հանդեպ մեր սերը (տես Հովհաննես ԺԴ.15):

Տիրոջ պատվիրանները հայտնվել են սուրբ գրություններում, Եկեղեցու ղեկավարների միջոցով և Սուրբ Հոգու հուշումներով: Հնազանդվելով պատվիրաններին ղեկավարները Տիրոջից օգնություն են ստանում իրենց կոչումները կատարելու համար:

Միասնություն

Իր մեծ աղոթքում Փրկիչը աղոթեց նրանց համար, ովքեր հավատում էին, որ կարող են Նրա հետ մեկ լինել, ինչպես Նա և Երկնային Հայրն էին մեկ (տես Հովհաննես 17:20–23): Միասնությունը շատ կարևոր է հաջողության համար Եկեղեցու բոլոր կազմակերպություններում:

Քահանայությունը և օժանդակ կազմակերպությունները չպետք է գործեն իրենց խորհրդականներից անկախ: Նախագահությունները կարող են շատ ավելին անել, եթե միավորվեն և խորհրդացկեն միմյանց հետ:

Զոհաբերություն

Մի հարուստ հարցրեց Փրկչին, թե ինչ նա պետք է անի հավերժական կյանքը ժառանգելու համար: «Պահիր պատվիրանները», - ասաց նրան Տերը: Երիտասարդ մարդն ասաց, որ մանկուց պահել է պատվիրանները, այնուհետև հարցրեց. «Ի՞նչ է ինձ պակասում»: Հիսուսը, իմանալով, թե ինչ կա նրա սրտում, ասաց նրան վաճառել իր ամբողջ ունեցվածքը, բաժանել այն աղքատներին և հետևել Իրեն: Սակայն երիտասարդը տխուր հեռացավ, քանի որ մեծ ունեցվածք ուներ (տես Մատթեոս ԺԹ.16–22):

Այս օրինակի վրա Տերը սովորեցրեց, որ ղեկավարները պետք է պատրաստ լինեն զոհաբերելու ամեն ինչ և հետևեն Նրան: Ինչպես հարուստ երիտասարդից, այնպես էլ ղեկավարներից կարող է պահանջվել զոհաբերել իրենց ամբողջ ունեցվածքը, կամ ժամանակը, կամ տաղանդները, կամ անձնական նպատակները, Տիրոջ գործը շարունակելու համար: Երբ ղեկավարները զոհաբերություններ են կատարում Տիրոջ և Նրա արքայության համար, Նա խոստանում է օրհնել նրանց ամեն բաներում (տես Մատթեոս ԺԹ.29; ՎԿՈ 97.8–9):

Ղեկավարների խնդիրները

Նպատակներ դնել

Ղեկավարները սովորում են, որ աղոթքով Տիրոջից ուղղություն խնդրելը կատարելու համար այն, ինչ Նա է ցանկանում, շատ կարևոր է իրենց կոչումներում ծառայելու համար: Նպատակներ դնելը Սուրբ Հոգու օգնությամբ կօգնի նրանց կատարել Տիրոջ կողմից իրենց տրված աշխատանքները:

Նպատակները որոշելուց, ղեկավարը պետք է պլանավորի, թե ինչպես է իրականացնելու այն: Օրինակ, տարածքի նախագահը կարող է նպատակ դնել բարձրացնել հաղորդության ժողովի հաճախելիությունը: Նա կարող է խնդրել ճյուղի նախագահին ճյուղի անդամներին կոչ անել հաճախել հաղորդության ժողովներին:

Ղեկավարները կարող են անդամներին խրախուսել անձնական նպատակներ դնել և իրականացնել դրանք: Ղեկավարները կարող են առաջարկել նպատակներ ուրիշների համար, սակայն նրանք պետք է իրենց անձնական նպատակներն ինքնուրույն որոշեն և մշակեն դրանց հասնելու եղանակները:

Պլանավորում և հանձնարարում

Հետևյալ քայլերը կարող են օգնել քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին պլանավորել ժողովները, միջոցառումները, ծառայության նախագծերը և նպատակները,

որոնք ուղղված են Տիրոջ աշխատանքը կատարելուն և կարող են օգտակար լինել անդամների միասնությունը ամրացնելու և ոչ անդամների նկատմամբ ավելի ընկերասեր լինելու համար: Այս քայլերը կարող են օգնել ղեկավարներին կազմակերպել տնարարության և Սփոփող Միության այցելող ուսուցիչների աշխատանքները, և օգնել քահանայության ղեկավարներին ճյուղում անդամներին ծառայության կանչելու գործում:

1. Պլանավորեք և կազմակերպեք: Ղեկավարները պլանավորում են բոլոր ժողովները, միջոցառումները և ավետարանային նպատակները: Այդ ծրագրերը կազմելիս ղեկավարները խնդրում են մյուսներին, օրինակ՝ խորհրդականներին, կիսվել իրենց մտքերով և օգնել կազմակերպման գործում:

2. Աղոթեք: Ծրագրեր մշակելիս և իրականացնելիս ղեկավարները աղոթում են Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար: Նրանք նույնպես աղոթում են, որպեսզի ուղղություն ստանան իրենց այդ աշխատանքում օգնականներ կանչելու համար:

3. Հանձնարարեք: Լավ ղեկավարը խնդրում է ուրիշներին օգնել իրեն, քանի որ գիտի, որ չի կարող և չպետք է անի ամեն-ինչ ինքնուրույն: Նա աշխատանք է հանձնարարում ուրիշներին նրանց ունակությունները զարգացնելու և փորձ ձեռք բերելու համար: Նա բացատրում է ծրագիրը: Այնուհետև, հանձնարարություններ է տալիս յուրաքանչյուր անձին, բացատրելով նրանց իր պարտականությունները և այն օրհնությունները, որոնք նա կստանա այդ աշխատանքը կատարելիս:

4. Օգնեք և աջակցեք: Պլանավորելուց, աղոթելուց և հանձնարարելուց հետո ղեկավարը աջակցում է նրանց, ում հանձնարարություններ է տվել: Նա սովորեցնում է այն ամենը, ինչ նրանք պետք է իմանան այդ գործը կատարելու համար և օգնություն է առաջարկում, սակայն չի կատարում աշխատանքը նրանց փոխարեն: Նա արտահայտում է իր սերը և վստահությունը, և խրախուսում է նրանց օգտագործել իրենց մտքերը և ոգեշնչումները, ոչ թե պարտադրում է վարվել իր ճանապարհով: Նա կարող է ուղղություն տալ կամ փոփոխություններ կատարել միայն անհրաժեշտության դեպքում:

5. Հետևեք: Հանձնարարություններ տալուց հետո ղեկավարը կանոնավոր կերպով պահանջում է առաջընթացի մասին զեկույցներ: Դա կարող է արվել ընկերական զրույցի, ժողովի կամ անձնական հարցազրույցի ժամանակ: Այդ զրույցի ժամանակ ղեկավարը շնորհակալություն է հայտնում և անկեղծորեն գովում և խրախուսում: Նա կարող է նաև քննարկել այն եղանակները, որոնք կօգնեն աշխատանքն ավելի լավ կատարել:

6. Գնահատեք: Երբ հանձնարարությունն ավարտված է, ղեկավարը գնահատում է այն հանձնարարված անձի հետ միասին: Նա շնորհակալություն է հայտնում, քննարկում է կատարածի արժեքը և կարող է այլ առաջադրանք տալ:

Օրակարգի պատրաստում

Օրակարգը ժողովի ծրագիրն է: Այն կարող է ընդգրկել աղոթքները, հիմները, ելույթները, հայտարարությունները, գործերը, հաշվետվությունները կատարված աշխատանքների վերաբերյալ, նոր հանձնարարությունները և այլ կետեր: Օրակարգը ղեկավարին օգնում է բաց չթողնել առավել կարևոր գործերը և առավել ճիշտ ձևով օգտագործել ժողովի ժամանակը: Այն նույնպես օգնում է նրան ղեկավարել ժողովը կազմակերպված ձևով:

Օրակարգը սովորաբար կազմում է նախագահող կամ այդ պատասխանատվությունը ստանձնած անձը: Նա հավաստիանում է, որպեսզի օրակարգը պարունակի այն ամենը, ինչ անհրաժեշտ է ժողովի նպատակներին հասնելու համար: Օրակարգ կազմողը որոշում է, որքան ժամանակ պետք է տրամադրվի օրակարգի յուրաքանչյուր կետին: Եթե ժամանակը չի բավականացնում բոլոր կետերը օրակարգում ընդգրկելու համար, ապա դրանք պետք է ընդգրկել հաջորդ ժողովի օրակարգի մեջ:

Ժողովների վարումը

Ժողովը վարող անձը գործում է որպես այդ ժողովի ղեկավար: Նա հայտարարում է նրանց անունները, ովքեր աղոթում են, խոսում են, վարում են երաժշտական մասը և այլ մասնակցություն են ցուցաբերում ժողովի ժամանակ: Ժողովը վարողը պետք է պատկառանքով կատարի իր գործը և ղեկավարի ժողովը Տիրոջ Հոգու առաջնորդությամբ:

Ժողովը նախագահող անձը կարող է վարել ժողովը կամ խնդրել մեկ ուրիշին վարել ժողովն իր ղեկավարության տակ: Օրինակ, ճյուղի նախագահը կարող է խնդրել իր խորհրդականներից մեկին վարել հաղորդութան ժողովը, կամ քվորումի նախագահը կարող է խնդրել իր խորհրդականներից մեկին վարել քվորումի ժողովը: Նույն սկզբունքը կիրառվում է օժանդակ կազմակերպություններում:

Խորհուրդներ

Տերը ղեկավարում է իր արքայությունը խորհուրդների սկզբունքով: Խորհրդի ժողովներ վարողները, օրինակ ճյուղի

խորհրդի ժողովը, քահանայության գործադիր կոմիտեի ժողովը, քահանայության և օժանդակ կազմակերպությունների նախագահությունների ժողովները (տես Ճյուղի Ուղեցույց), պետք է կիրառեն հետևյալ սկզբունքները.

- Կենտրոնանալ ավետարանի վարդապետությունների և սկզբունքների վրա, ոչ թե կամայական կամ հորինված սկզբունքների վրա:
- Կենտրոնանալ անհատների վրա և նրանց ավետարանի մեջ զորացնելու վրա, երբեք չմոռանալով պահպանել տեղեկությունների գաղտնիությունը:
- Խրախուսել ազատ և բաց քննարկումները, հնարավորություն տալով բոլորին արտահայտվել: Ղեկավարները ոչ միայն պետք է խոսեն, այլ նաև լսեն:
- Աջակցել և օգնություն ցուցաբերել նախագահող ղեկավարներին որոշումներն իրականացնելու համար:
- Ղեկավարել սիրով և մտահոգվելով բոլորի կարիքների և բարեկեցության մասին:

Պահել գաղտնիությունը

Ղեկավարները չպետք է որևէ մեկին հայտնեն գաղտնի որևէ տեղեկություն, որը նրանք ստանում են ինչպես պաշտոնական հարցազրույցների, այնպես էլ ոչ պաշտոնական զրույցների ժամանակ: Հարցազրույցներից կամ խոստովանություններից ստացված տեղեկությունները, ինչպես նաև անձի տասանորդի և նվիրատվությունների գումարի չափի մասին տեղեկությունները պետք է խիստ գաղտնի պահվեն: Ղեկավարը չպետք է ուրիշների հետ, ներառյալ խորհրդականների և կողակցի, քննարկի որևէ մեկի անձնական գործերը, եթե այդ անձը չի տալիս իր համաձայնությունը: Այն ղեկավարը, որն անտեսում է նման տեղեկության գաղտնիության կարևորությունը, թուլացնում է այն մարդկանց հավատքն ու վկայությունները, որոնց նա ծառայում է, և կորցնում է իր հանդեպ վստահությունը:

Եկեղեցու Նյութերի և Ընտանեկան Պատմության Տեղեկության Ձեռքբերում

Տեղական ղեկավարները և այլ անդամները կարող են ձեռք բերել Եկեղեու նյութերը, ներառյալ սուրբ գրությունները, ուսուցման ծրագրերը, Եկեղեցու ամսագրերը, ներքնազգեսգտներ և տաճարի զգեստներ, Եկեղեցու իրենց բաշխման կենտրոնից կամ ծառայության կենտրոնից, Սոլթ Լեյքի Բաշխման Կենտրոնից կամ Եկեղեցու Ինտերնետային պաշտոնական էջից. www.lds.org:

Ընտանեկան պատմության վերաբերյալ տեղեկությունը կարելի է գտնել Եկեղեցու ընտանեկան պատմության Ինտերնետային էջում. www.familysearch.org:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02311 78201 7
31178 201